ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 109-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ աշխարհասփյուռ հայորդիներ, դարեր առաջ սկսված և մինչ օրս չավարտված մեր պայքարը հաճախ ստիպել է մեզ անմեղ արյամբ ներկել մեր լեռնակամարը՝ վաստակելու համար մեր սուրբ Հայրենիքում ապրելու և արարելու արդարացի իրավունքը:

Դարերի մեջ մենք հալածվել ենք մեր հավատի ու պետականության համար, մեզ պարզած սրի դեմ պայքարել ենք գրչով:

Խաչի ծանրության համար ստեղծված մեր հոգևորականների ձեռքերը հանուն հայրենիքի ու հավատի չեն զլացել զենք վերցնել, մեր մայրերը կաթի հետ են իրենց զավակներին փոխանցել սերն առ հայրենիք ու հայկականություն:

Սիրելի՛ հայորդիներ, այսօր մեր հայրենիքն ապրում է իր համար պատմական ժամանակաշրջանը:

Մեզանից յուրաքանչյուրի սրբազան պարտքը պիտի լինի միախմբվել, գործել հանուն Հայի, Հայրենիքի ու պետականության, պահպանել մեր ազգային ու մշակութային արժեքները

Զինվեք սիրով, հավատով ու ողջախոհությամբ: Դարձեք մի մարմին ու գործեք հանուն Մայր Հայաստանի, որ ապացույցն է հայի հավիտենական հարության, քանզի գոյության համար մղվող մեր պայքարն ավարտված չէ:

Խոնարհումս բոլոր սուրբ ննջեցյալաց, ում հոգիներն արդեն 109-րդ տարին է վերածնվում են յուրաքանչյուր աշխարհ եկող հայի մեջ՝ կտրելու համար այն ձեռքը, որը բարձրանում է ոչ թե շոյելու, այլ ցեղասպանելու համար:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան